ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի և Ռուսիայի համար տարեկան 23 ֆրանգ
Ուրիշ ամեն տեղերի » » 20 »
Տնօրէնութիւնն լինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիրները կանխիկ կը վճարուին։ Վերցամեայ կամ եռամեայ բաժնորդութիւններ ալ կընդունուին, առանց ուրէ յաւելման բաժնէգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը ամեն օր կէսօրէն յետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 42

1886 ՅՈՒՆՎԱՐ 6

(1886 ԴԵԿՏ. 25 Հ. Տ.)

ՀՈՐԵՔՇԱԲԹԻ

Կը հրատարակուի Շ. և Երէք. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 դիմագիրը 2 սանտիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE.

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Hôtel Forer).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջիկայ եւ 61–րդ յօդուած։ —Հայր ի Ռումանիա. —Ցամաք Թիւրքիան (Տիզբանակերտ).—Հայասէր Պ. Ձ. Պրայս եւ Փարիզի Հայերն. —Հայասէր Պ. Ալբօյ-Պօլիւօ ի Փարիզ. —Ֆրանսական լուրեր. —Տեղական. —Արեւելեան խնդիր.—Ազդ. —Արտասահմանի լուրեր. —Առեւտրական.—Յանձնարարութիւններ։

ՌՈՒՍԻԱ ԵՒ 61–ՐԴ ՅՕԴՈՒԱԾ

Այս վերնագրի տակ հրատարակած էինք նախորդ թուով մի հեռագիր զոր Հավասի գործակալութիւնը դեկտ. 30ին ղրկած էր Սօֆիայէն Փարիզի լրագիրներուն։ Այդ հեռագրի համեմատ Ռուսիան Թիւրքիայէն պահանջած է Պէրլինի դաշնագրին մէջ Այմէնիայի վերանորոգութիւններուն նկատմամբ դրուած պայմանի գործադրութիւնը։

Ինքնին հասկնալի է թէ այդ լուրը ինչպիսի տպաւորութիւն արած կը լինի այսուհետեւ հայ գաղթականութեան վրայ և շատեր կը հարցունեն մեզ թէ ստո՞յգ արդեւօք է արդեօք այդ լուրը։

Իւրաքանչիւր ոք իւր համոզումներուն համեմատ մեկնութիւն կուտայ։

Ոմանք որք շատ յոյս չունին թէ Ռուսիան չկրնայ պաշտպանել Այմէնիայի դատը, կը թերահաւատին այդ լուրի վրայ և զգոյշ կը յայտնեն թէ ե՞ր մի այդպիսի լուր Կ. Պոլսէն Պուլկարիա և Պուլկարիայէն Փարիզ կուգայ և ոչ թէ Կ. Պոլսէն ուղղակի Փարիզ։

Ոմանք մեզ վախ կ'յայտնեն որ Մաքսիմ Հայ գաղթականութիւնը վրդովայ հեռագրել նորին Վեհափառութեան Մակար Ս. Կաթողիկոսին աղաչելով որ բարեհաճի դնել յոտս Ամենազօրեան Զարին այս նկատմամբ հայերի դադարած երախտաւոր խորհուրդները և անհատն դադարումները։

Ուրիշներ ալ որք չեն ուզեր զոհական ցնցումներու ենթարկուած լինել, խոհեմութիւն կը համարին սպասել մի քիչ եւս և այդ լուրի մինչև ո՛ր աստիճան ճշմարիտ լինելը իմանալէ յետոյ, ըստ այնմ ուէ ուրոշում տալ։

Ուստի մենք ալ կուզանք այս առիթով գրել այն մի քանի տողերը։

Մենք կարող բացատրութեամբ տալ կը ճիշդ է այդ լուրը· պի կըսեն նայ պատահիլ երբեմն որ Հավասի հեռագրած լուրերուն մէջ ալ սխալներ սպրդին։ Թէև Հավասի գործակալութիւնը ամեն միջոցներ ունի ճիշդ և կարևոր լուրերը ստանալու, բայց վերջապէս նոքա ալ մարդ են, կրնան խաբուած կամ սխալած լինիլ։

Այնու ամենայնիւ, քանի որ հայկական դատին մէջ ամենէն աւելի շահ ունեցող տէրութիւններն են Անգլիա և Ռուսիա, եթէ վերջապէս մի եւրոպական տէրութիւն յանձն պիտի առնէ մեր խնդիրը դնել դիւանագիտական դրասեղանին վրայ, հաւանօրէն պիտի լինի նա Ռուսիան կամ Անգլիան։

Անգլիական մեծ ազգի քաղաքակրթութեան վրայ հիացում և համակրութիւն ունենալով հանդերձ, մենք շատ յոյս չունինք թէ Անգլիան ջերմապէս կը պաշտպանէ հայկական դատը մինչև այժմ Անգլիայի կողմէն պլատոնական համակրութենէ զատ մի բան չտեսանք Այմէնիայի համար։

Եթէ հայկական խնդիրը իրեն մի յինակէտ ունեցող եւրոպական մի ջազդային մի դաշնագրի մէջ, այդ եղած Ռուսիայի շնորհով։ Պէրլինի վեհաժողովին մէջ Անգլիայի ներկայացուցիչները անդամալուծեցին մինչև անգամ Ռուսիայի մեղ արած այդ շնորհը որ աւելի գործնական և աւելի արդիւնաւոր պիտի լինէր։

Ահաւասիկ բազդատութեան համար դնենք այսուհետ Սան-Ստեֆանոյի դաշնագրին 16–րդ յօդուածը և Պէրլինի դաշնագրին 61–րդ յօդուածը։

Ռուսիան Սան-Ստեֆանոյի դաշնագրին մէջ Թիւրքիայէն ստորագրել տուած էր հետեւեալ պայմանը.

«Յօդ. 16. Քանի որում ռուսական զօրքերի հեռանալը Այմէնիայի մէջ իրենց դանուած հողերէն որոնք պէտք է որ Թիւրքիան վերադարձուին, կընայ տեղ տալ կռիւներու և խառնակութիւններու որոնք երկու երկիրներուն մէջ յարաբերութիւններուն վնասն, Բ. Դուռը պարտաւորութիւն կը ստանձնէ անյապաղ իրագործել տեղական պահանջներուն համեմատ բարեկարգութիւնները և վերանորոգումները Հայերուն բնակած նահանգներուն մէջ և երաշխաւորել նոցա ապահովութիւնը Քիւրտերուն և Չէրքէզներուն դէմ։»

Նոյն դաշնագրի 25–րդ յօդուածն ալ կը արամադրէր որ ռուսական զօրքերը Այմէնիայէն պիտի հեռանային խաղաղութեան դաշնագիրը կընքուելէն մինչև վեց ամիս։

Ուրեմն ինչպէս որ Աբեւելեան Րումելիի վերանորոգութիւնները դործադրուեցան ռուսական զօրքերն հան գանուած միջոցին և այդ զօրքեր հեռացան որոշեալ ժամանակէն յետոյ, Պէրլինի դաշնագրի 22–րդ յօդուածին համեմատ, նոյնպէս պիտի լինէր նաև Այմէնիայի համար Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16–րդ յօդուածին համեմատ։ Ռուսական կառավարութեան դրած պարտաւորութիւնը, ինչպէս Պուլկարիայի նոյնպէս և Այմէնիայի համար, պահանջուած վերանորոգութիւնները գործադրել իր խիղ ներկայութեամբ, աւելի ապահով ու երաշխաւորուած կը լինէր գործնականի մասին քան թէ այժմեան դրութեան մէջ որ Անգլիայի արած կարգադրութեան հետեւանքն է։

Պէրլինի վեհաժողովին մէջ Լորտ Պիքօնսֆիլտ և Լորտ Սօլսպէրին, Սան-Ստեֆանոյի դաշնագրին 16–րդ յօդուածի վերի մասը որ ռուսական զօրքերն Այմէնիայէն մեկնելէ յետոյ այնտեղ դարձեալ անկարգութիւններ չպատահելու համար, վերանորոգումներն այլ եւս առանց յապաղման գործադրելուն կը վերաբերէր, բոլորովին չկրցան տեսին և թողուցին միայն վերջին մասը, յաւելլով թէ Բ. Դուռը այս նկատմամբ իւր կատարածները պարբերապէս պիտի հաղորդէ մեծ պետութիւններուն որոնք պիտի հսկեն այդ վերանորոգումներուն գործադրութեան վրայ։

Բայց ինչ երաշխաւորութիւն տուած է Բ. Դռնէն նոցա գործադրութեան համար, ոչինչ, բայի դաշնագրին տակ Օսմ. ներկայացուցիչներուն դրած ստորագրութիւններէն։ Այլ տակաւին քանի քանի խարդի հնամայուճեր խոստացած էին զանազան բարեկարգութիւններ որոնք մեռեալ տառեր մնացած են, ինչպէս այժմ 61–րդ յօդուածը։

Ի զուր Վեհաժողովի յունիս 26ի նստին մէջ, իշխան Կորչաքով հրատէբ կը կարդար որ «Վեհաժողովի օրաշխատ անկախ չճանչցուած նահանգներուն բնակիչներուն ստոյգ ածնելը, կեանքը և այլն ապահովելն, ոչ թէ միայն Թուրքի վրայ խոստումներով որք կրնան նախարդներին պես անազդեցիկ մնալ և զկրծումներն ու հարստահարութիւնները անարգել շարունակել, այլ եւրոպական տէրութիւններուն գործակցութեամբը որ կրնայ այդ խոստումներուն ազդեցութիւնը ապահովել և վստահութիւն ներշնչել ժողովուրդներուն։» Անգլիական կառավարութեան ներկայացուցիչները բաւական համարեցին Քարաթէոդորի փաշայի արած յայտարարութիւնը յունիս 28ի նստին մէջ թէ՝ «երբ Օսմանեան կառավարութիւնը պարտաւորութիւն կը ստանձնէ, անտարակոյս կը նշանակէ թէ համոզուած է որ կարող է զայն կատարել։» Այդ, բայի Պէրլինի դաշնագրէն, Անգլիան 1878 յունիս 4ին մի մասնաւոր դաշնագրութիւն ևս արած է Թիւրքիոյ հետ, վերանորոգումներ մտցնելու համար Ասիական Թիւրքիոյ մէջ։ Ուրեմն Անգլիան միւս բոլոր պետութիւններէն աւելի պարտաւորութիւն ստանձնած է հսկելու այդ մասին։ Այլ ասիայի ինչ ըրած է գործնականապէս։

Քաղաքագիտական, դիւանագիտական և այլն նկատողութիւններ ինչ փաստեր ալ որ յառաջ բերեն ի նպաստ Անգլիոյ ընդդէմ Ռուսիոյ Այմէնիայի նկատմամբ, այդ ամենը տեսականի մէջ միայն համոզիչ կը թուին. բայց գործնականին մէջ ներկայութիւնները միշտ կատարեալ յոյս ազդեցութիւն կ'ընեն։ Ուստի մենք ալ հայ աշխարհին թէ Անգլիան մինչև այժմ լուռ պլատոնական համակրութիւն ցոյց տուած է հայկական խնդրին. իսկ Ռուսիան թէև աւելի ծանրաշարժ և քիչ խոստացող, բայց իւր համակրութեան գործնական ապացոյցներ երբեմնէ ալ չի պակսած, և մենք Այմէնիոյ համար արդիւնաւոր քաղաքականութիւնը կը տեսնենք այն ընթացքի մէջ որով մեր աչքեր չհետացուենք բնաւ Անգլիէ որ չծարհոյ մեզ 16–րդ յօդուածը որ ծնունդ տուաւ 61–րդ ին։

Առ այժմ այսչափ։ Մենք դարձեալ կը խօսինք այս նիւթի վրայ ընդարձակօրէն երբ օրը և ժամը գայ և առ այժմ տարաժամ կը համարինք մանրամասնութիւնների մանել այս նկատմամբ։

Մ. Փ.

(Շարունակութիւն 41-րդ թիւէն եւ վերջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ Ի ՊՈՒՐՍԱ

Ի ՅՈՐ ՀԱՐՑ ՀԱՅՈՑ ՅԱՐԵՒ

Հայկական հարց ասելով կը հասկնանք Հայաստանի ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին հայ ազգաբնակչութեան ապահովութեան, անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Հայկական հարցը ունի երկու կողմ, մէկը՝ ներքին, միւսը՝ արտաքին։ Ներքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Արտաքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան արտաքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ապահովութեան։ Ներքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Արտաքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան արտաքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ապահովութեան։ Ներքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Արտաքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան արտաքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ապահովութեան։

Ի ՅՈՐ ՀԱՐՑ ՀԱՅՈՑ ՅԱՐԵՒ

Հայկական հարց ասելով կը հասկնանք Հայաստանի ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին հայ ազգաբնակչութեան ապահովութեան, անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Հայկական հարցը ունի երկու կողմ, մէկը՝ ներքին, միւսը՝ արտաքին։ Ներքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Արտաքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան արտաքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ապահովութեան։ Ներքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան ներքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ազատ զարգացման եւ բարգաւաճման։ Արտաքին կողմը կը պարունակէ հայ ազգաբնակչութեան արտաքին կեանքի այն խնդիրները, որոնք կը վերաբերին անոր ապահովութեան։

1883 Դեկտեմբեր 9/21 Հ. Կ. ՎԱՂԱՏՈՒՐ
Թուխաց

Ա՛յժմ մեր ժողովուրդը պահանջում է իմանալ, թէ ինչ է արել ինքնապաշտպանութեան համար։

Ի՞նչ է արել, ինչ է անում, ինչ է պատրաստում։

Ինչպէս գիտէք, ամբողջ ամառ ժողովուրդը ոտքի վրայ էր։ Ամէն կողմ ժողովներ էին կազմակերպւում, ամէն կողմ ընտրւում էին պատգամաւորներ, որոնք պիտի գնային Պոլիս եւ ներկայացնէին ժողովրդի պահանջները։ Ամէն կողմ ընտրւում էին պատգամաւորներ, որոնք պիտի գնային Պոլիս եւ ներկայացնէին ժողովրդի պահանջները։ Ամէն կողմ ընտրւում էին պատգամաւորներ, որոնք պիտի գնային Պոլիս եւ ներկայացնէին ժողովրդի պահանջները։

Ի՞նչ է արել, ինչ է անում, ինչ է պատրաստում։

Ինչպէս գիտէք, ամբողջ ամառ ժողովուրդը ոտքի վրայ էր։ Ամէն կողմ ժողովներ էին կազմակերպւում, ամէն կողմ ընտրւում էին պատգամաւորներ, որոնք պիտի գնային Պոլիս եւ ներկայացնէին ժողովրդի պահանջները։ Ամէն կողմ ընտրւում էին պատգամաւորներ, որոնք պիտի գնային Պոլիս եւ ներկայացնէին ժողովրդի պահանջները։ Ամէն կողմ ընտրւում էին պատգամաւորներ, որոնք պիտի գնային Պոլիս եւ ներկայացնէին ժողովրդի պահանջները։

---

(1) Տե՛ս թիւ 3, 10, 13, 25 եւ 37։
(2) 5 դրուշը 1 ֆրանկ կ՚ընէ։

Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԺԱՂՈՎՐԴԻ

Ը.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ (1)

Ք.

ՂԵՎՈՆԴ ԱՂՈՒ

խնդրանաց ուշադրութիւն։ Ամեան եղանակին չատ տաք կըլլայ Տիգրանակերտի օդն։ յարկի մը օդն երբ չբաւէ մէջը բնակողներուն, ի հարկէ օդի ապականութենէն անառողջութիւն յառաջ կը գայ և փոխանցական ախտեր կը ճարակին։ լատ ընդհանուր դպրոցական սովորութեան գոնէ յուլիսի մէջն անգամ արձակուրդ չկայ։ կարևորութիւնը Ծանուցանողին կը պատսխանուի պաշտօնական ակումբէ «Զար սովորութեան պատճառ մ'ըլլար»։ Անցեալ տարի երբ թէ տեղի ունեցաւ կիսակատար արձակուրդ մը։ բայց հակառակ արդարութեան՝ վարժապետներէն մեկիկ ամեական ղեկչեյին անառակ իտական պատրուակաւ, որ մեծ խռովութեան առիթ եղաւ։ Ա յս պարագայներու մէջ, հակառակ դպրոցական բարբարոսային պատժոց, աշակերտներն եղած են անհնազանդ, ըմբոստ, դիմադարձ, ապերասան, ատատ իրենց ուզած տեղն կամ դպրոցն երթալու ևլն. ևլն.։ Զգայուն սրտին մեծ ցաւ կըլլայ, երբ ուշադրութիւնը առ այն դարձընէ։

ՀԱՑԱՍԷՐ Գ. Ճ. ՊՐԱՑՍ ԵՒ ՓԱՐԻԶԻ ՀԱՑԵՐՆ

Անգլիական «Տէյլի Նիուս» լրագրին մէջ կը կարդանք հետեւեալը։

«Փարիզի հայ դաղթականութիւնը մասնաժողով մը կազմեր է հայ ժողովրդի չահերը յառաջ տանելու համար։

« Կրթութեան Օժանդակ Միութեան » նախագահ Գ. Պրայսին նամակ մը ուղղեր են, հասարակաց խորհրդարանի վերատին անդամ ընտրուելուն առիթով դինքը շնորհաւորելու համար։

Կը յայտնեն թէ իւրեանց հայրենակիցները ի Տաճկաստան այլևս չեն վայելեր իւրեանց դանդատներ կամ երախտապարտութեան դգացումներ ներկայացնելու իրաւունքը, Անգլիոյ մէջ իւրեանց ունեցած ազնուապարոյ բարեկամներուն։

Կըսեն թէ՝ ոչ թէ միայն սոսկալի բռնութիւն մը կը տիրապետէ Արմենիոյ մէջ, այլև Տաճիկ կառավարութիւնը Կ. Պոլսոյ պատրիարքարանին վրայ սաստիկ ճնշում ի գործ կը դնէ որպէս զի ամեն կողմի հայերի ազգային դգացման արտայայտութիւնը արդիլէ։»

ՀԱՑԱՍԷՐ Գ. Լ.ԸՐՈՑ—ՊՈԼԻԷՕ Ի ՓԱՐԻԶ

Փարիզաբնակ մեր հայ բարեկամներէն մէկին Յունվար 1 ամսաթուով մեզ ուղղած մասնաւոր թղթակցութենէն կը քաղենք հետեւեալը։

«Հայկական խնդիրը կը սկսի հետաքրքրաշարժ դառնալ քաղաքական շրջանակներուն մէջ։ չատեր որոց հետ խօսակցելու բախտաւորութիւնն ունեցայ, ինձ յայտնեցին թէ ծանօթ են հայկական խնդրին։ «Քաղաքական և բարոյական գիտութիւնների վարժարան»ին (Ecole des Sciences politiques et morales) բարձրադոյն ուսման առարկաներէ մին եղաւ նաև մեր հայրենիքի վիճակը։ Գ. Լըրօյ—Պոլիէօ (Leroy-Beaulieu) որ յանձն առած է խօսիլ այնտեղ արևելեան խնդրին վրայ, այս չարաթ ամբողջ մէկ առաւօտեան ժամերն նուիրեց հայկական խնդիրը մանրամասնօրէն բացատրելու։ համակրութեամբ խօսեցաւ Հայերին, իրենց պատմական ծագումի և իրենց բարքին և այլն նկատմամբ։ յոյս յայտնեց որ եթէ մի նոր քօնֆէրանս լինի, անտարակոյս այս անգամ մի քանի դոհացումներ պէտք է տրուին Հայերին և վերջացուց իւր ճառ, ասելով թէ Հայը մեծ ապագայ ունեցող մի ժողովուրդ է դի քաղաքակրթութեան միակ ներկայացուցիչն է Ասիոյ մէջ և թէ ընդարձակօրէն կը ծաւալէ կրթութիւնը և այլն և այլն։»

Անշուշտ ամեն Հայեր որ այս տողերը կը կարդան, սրտովի կը վիանան խրախուսութեանս հետ իրենց երախտագիտութեան ջերմ զգացումները ներկայացնել յիշեալ անուանի ուսուցչապետին (բրօֆէսէօր) որ իրրև ճշմարիտ գիտնական և պատմագէտ դիտէ խորազնին տեսութեամբ գնահատել ազգերի արժանիքը և յատկութիւնները նոյն իսկ իրենց անկեալ վիճակին մէջ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարական տագնապը կը տիրէ դեռ։ Պ. սը Ֆրէյսինէ յանձն առած է կազմել նոր նախարարութիւնը որ սահայն բաւական դժուարութիւնների կենթարկուի։ Պ. սը Ֆրէյսինէ տեսակցելով խորհրդարանի գլխաւոր ներկայացուցիչներին հետ կը ջանայ միութիւն գոյացուցանել զանազան գոյների պատկանող հանրապետականներին հետ և այդ կերպով մեծամասնութիւն կազմել խորհրդարանին մէջ։ Հաւանօրէն նոր նախարարութիւնը պիտի կազմուի նախորդներէն մի քանի անդամներ ընդունելով իւր մէջ և մի քանիներ ալ արմատական կուսակցութեան պատկանողներէ։

—Հանրապետութեան նախագահ Պ. Ժիւլ Կրէվին մի պատգամաւոր պիտի դրկէ խորհրդարանին որի մէջ իւր վերընտրութեան առիթով չնորհակալութիւնները յայտնելէ յետոյ, պիտի խօսի նաև հետևեալ երկու կէտերուն վրայ որոց նկատմամբ քանիցս առիթ ունեցած է խօսակցիլ խորհրդարանի անդամներէ չատերին հետ մասնաւոր տեսակցութեան մէջ։

Պ. Ժիւլ Կրէվին պիտի յայտարարէ թէ Հանրապետութիւնը չէ հարուածուած հակառ. 4 ի և 18 ի ընտրութիւններէն։ Ենթէ մի քանի նահանգների մէջ հանրապետական կուսակցութեան յոյսերը ի դերև եղած են, այդ բան պէտք է վերագրել, ոչ այնչափ ժողովրդի իսկական ձգտումներին, որչափ պահպանողական ընտրելիների ճարպկութեան որոց ամենքն ալ ծածկեցին իրենց ճշմարիտ դգացումներ և իրենն օդնութեան կանչեցին իրենց ընտրողների մասնաւոր չահերը միայն։ Պ. Ժիւլ Կրէվի յայտարարելիք երկրորդ կէտն ալ սա կը լինի թէ Կառավարութեան անհատատ և ստէպ փոփոխական վիճակն է որ վտանգներ յառաջ կը բերէ հանրապետական կառավարութեան կանոնաւորապէս զարգացման դէմ։ Պ. Նախագահը իւր պատգամաւոր պիտի վերջացունէ հաստատելով թէ Հանրապետութիւնը Ֆրանսայի մէջ այնչափ խորին արմատներ բռնած է որ այլևս չվախնայ։

Նոր կազմուելիք նախարարութեան պետը պիտի կարդայ Պ. Նախագահի պատգամաւորը թէ՛ Երեսփոխանական ժողովին և թէ՛ Սենատորական մէջ։

—Դեկտ. 30 ին Մատակասքարէն եկած լուրեր կիմացունեն որ Ֆրանսական և Հովա լիագօրները երեք օր վիճաբանելէ յետոյ համաձայնուեր են խաղաղութեան պայմաններին վրայ որոց չական մասերը ատոնք են. այդ երկրէ մի մաս և հիւսիսային–արևմտեան ծովեզերքի նաւահանգիստները թողուլ Ֆրանսային, ինչպէս նաև ընդունիլ Ֆրանսայի դերիշխանութիւնը Մատակասքարի Թագուհուն անեղիք արտաքին յարաբերութիւններուն մէջ։

ՏԵՂԱԿԱՆ

1885 տարւոյ մէջ ի Մարսէյլ մեռածների թիւը։

Դեկտ. ամսին մէջ, Մարսէյլի քաղաքային վիճակի արձանագրութիւնները կիմացուի որ 924 մարդ մեռած է որոյմէ 503 ը արական սեռէ են, իսկ 421 իգական սեռէ։ 5 պատահական մահ եղած է, 11 անձնասպանութիւն։ մարդասպանութիւն չէ եղած բնաւ։

1884 ի Դեկտ. ին մէջ, մեռած են 839 անձ որոյմէ 15 ը պատահաբար և 8 ը անձնասպանութեամբ մեռած են, և 1 անձ ալ սպաննուած է։

1885 տարւոյ մէջ մեռած են 12,352 անձ որոյմէ 119 ը պատահաբար և 114 ը անձնասպանութեամբ են մեռած. 33 անձ ալ սպաննուած են։

1884 թուականին 12,500 անձ մեռած են. ուրեմն վերջին տարւոյն մէջ նախորդ տարիէն 148 անձ պակաս մեռած լինելու բաղդատութիւնն ունեցած ենք։

Բաւղի առեւտուր Մարսէյլի մէջ 1885 թուին.

Նախընթաց տարւոն մէջ Մարսէյլ եկած է 169,474 հակ բուրդ, որմէ 78,794 հակը այտեղ ծախուելու համար և 50,680 ը ուրիշ երկիրների համար այտեղէ փոխանցուած է։

1884 թուին եկածները պակաս եղած էին, 110,238 հակէն աւելի չէր անոնք, որմէ 68,293 ը Մարսէյլի հրապարակին համար և 41,940 ը ուրիշ երկիրների համար փոխանցուած էին։

Պ. Հ. Դօննելի տարեկան տեղեկագրին համեմատ կը հաստատուի որ Աւստրալիան մեծ քանակութեամբ բուրդ կուգայ։ Բայց դրեթէ բոլորն ալ ուրիշ երկիր փոխանցութեան համար, որ չատ յաւալի է տեղական վաճառականութեան տեսակէտով և արժանի է ուշադրութեան ձեռնհաս մարմինների կողմէն։

— Քաղաքապետական Խորհրդի Յունվար 4 ի նիստին մէջ Խորհրդականներէն Պ. Պ. վալզ և Կրա առարկելով թէ Խորհուրդը չուղէր բնաւ կարևորութիւն տալ իրենց արած դիտողութիւններուն և միշտ կը խեղդուի իրենց բաղձի ձայնը, հեռացան ժողովարահէն և իրենց ընտրողներ կը հրաւիրեն այժմ ի գումարումն, քաղաքապետական Խորհուրդին իրենց նկատմամբ բռնած դիրքը նոցա յայտարարելու համար։

—Իտալական կառավարութիւնը իտալական թագի տպագործական Խաչը նուիրեց Պ. Ալֆրէտ Թրէսինէին որ մի չոգենաւային ընկերութեան տնօրէնն է ի Մարսէյլ։

—Քօրս կղզիէն կիմացունեն թէ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին Բրխատափոր Կոլոմբոսի չորրորդ հարիւրամեակը տօնելու համար Գալվիի մէջ ուր ծնած է անուանի նաւագնացը, Իտալացի նշանաւոր պատմաբանների կարծիքին համեմատ։ Ամերիկաի Միացեալ–Նահանգների կառավարութիւնն ալ մտադիր է մասնակցիլ Քօրսի բնակիչներուն կատարելիք այդ շքեղ հանդէսին։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Փարիզ, 1 Յունվար 1886

Ամենքէն եկած վերջին լուրերին նայելով, Յունաստան կը շարունակէ իւր սպառազինութիւնները։ Մանաւոր ուշադրութիւն կը լինի ծովեզերեայ ամրութիւններին։ Այթաի մէջ բանակած զօրքերը չատ կը նեղուին տեղէն։ Զօրքերէն հարիւրին հինգը հիւանդ են։

Փարիզ, 2 Յունվար

Սօֆիաէն կիմացունեն թէ Սերպերին ամեն օր Պուլկարների մասին պատմած եղելութիւնները անհիմ կը նըկատուին և դեսպանագիտական շրջաններին մէջ ոչ ոք կարևորութիւն չտար նոցա։ Ուստի պուլկարական կառավարութիւնն ալ որոշած է անպատասխան թողուլ այդպիսի յարձակումները։ Ա յնու ամենայնիւ կարող է բացատրել և հաստատել թէ Սերպերին Պուլկարների համար պատմածները կատարեալ սխալ են։ Կերևի թէ երէկ Պելկրատէն նշանակուած կոտորածները տեղի ունեցած են, ոչ թէ պուլկարական հողին վրայ, այլ Բիլեօթի մօտ, և նոյն իսկ Սերպերն իրենք պրած լինելու են։

Իչխանին թիկնապահը, Պ. Մարինօֆ որ Սլիվնիձայի զօրաբանակի աջ թևին հրամատարութիւնն արած է և այնտեղ պատերազմին մէջ վիրաւորուած էր, մեռած է այժմ։

Կ. Պոլիս, 3 Յունվար

Ալեքսանդր իշխանը խնդրեց Բ. Դռնէն որ Սերպիայի ստիպել բանակցողները ղրկել Սօֆիա որպէս զի կարելի եղածին չափ շուտ վերջ տրուի արդի վիճակին որ բաղում ծախքերի պատճառ կը լինի։ Աւելցուց նաև թէ Մաճիա փաշային քով մի սպայ ալ պիտի դնէ բանակցութիւններին համար։ Բ. Դուռը պատասխանեց Դեկտ. 31 ին թէ իչխանի փափաքները համեմատ պիտի աչխատի Պելկրատի մէջ և Մաճիա փաշային հետ մի սպայ դրուիլն ալ կընդունի, բայց երկուքին համար մէկ ձայն միայն հաշուուելու պայմանով։

—Անդրիանուպօլսէն եկած լուրեր դարձեալ կիմացունեն թէ դժգոհութեան նշաններ կը տեսնուին զօրաբանակին մէջ, իրենց երկարատև անգործութեան պատճառով։ Բանի չափ սպայներ դաղափար տարածած էին թէ լաւադոյն է վերադարձնել զօրքերը որ երթան իրենց արտերը մշակեն քան թէ պէնքը թևերին տակ ծռան, մանաւանդ քանի որ այժմ կառավարութեան դանձը նեղ դրութեան մէջ կը գտնուի։ Ա յդ սպայներ չղթայի ի ձեռին Կ. Պոլիս դրկուեցան։ Նոյն յուզում կը տիրէ նաև Եպիրոս համախմբուած օսմ. զօրքերին մէջ։

—Բ. Դրան յայտնած փափաքին համաձայն, մեծ պետութիւնները տարմադիր չեն երևիր այժմ մի քօնֆերանս գումարելու ի Կ. Պոլիս և ադդ ազդոյց կընայ լինիլ Պ. Նայլէն արձակուրդով մեկնիլը առաջիկայ չաբաթի մէջ։ Գործի կոմսը որ Լօնտոնի դեսպան անուանուած է, նոյնպէս իր

պատրաստութիւնները կը տեսնէ մեկնելու համար։

Փարիզ, 4 Յունվար

Բ. Դրան նկատմամբ Յունաստանի բռնած դիրքը հետզհետէ աւելի անհանգստութիւն կը պատճառէ։ Պ. Տէֆիեանի յայտարարեց մեծ պետութիւններուն ներկայացուցիչներին թէ Յունաստան պիտի պարտաւորի պատերազմ հրատարակել Թիւրքիոյ դէմ եթէ Եւրոպան, Պուկարական խընդիրը կարգադրելէ յետոյ, ինկատի չառնու նաև հելլենական չահերը։ Յունաստան պաշտպանութիւն կակլեկալէ Ֆրանսայէն և Անգլիան. իսկ Իտալիան չպիտի զատուի Ալմանիայէն և Աւստրիայէն։

Փարիզ, 5 Յունվար

Սերպ և Պուլկար կառավարութիւնները դեռ չեն համաձայնուած թէ ո՛ր տեղ պիտի լինին խաղաղական բանակցութիւնները։

—Կիմացուածն թէ Սերպիան պիտի հաւանի խաղաղութեան այն պայմանով միայն որ նախկին հաստատուած վիճակը վերահաստատուի և չպնդեն պատերազմական տուգանք վճարելու համար։ Ակէ զատ, Սերպիան կը փափաքի նաև առևտրական մի դաշնագիր կնքել Պուլկարիայի հետ, Եւրոպական միւս երկիրներուն մէջ գործադրուած սկզբունքներուն համեմատ։

—Հաւատով ապրիլ բնակչած տեղեկութիւնների համեմատ, դեսպանագիտական շրջաններուն մէջ բնաւ խնդիր չէ յարուցուած մի քօնֆէրանս գումարելու, Արևելեան խնդրին կարգադրութեան համար։

ԱԶԴ

Փարիզի Le Voltaire լրագիրը երկուշաբթի օր հրատարակած է «Եւրոպա և Ամէնիա» վերնագրով մի նամակ զոր յաջորդ թիւերով կը թարգմանենք մեր ընթերցողներին ծանօթացնելու համար։

Նոյն լրագիրը Դեկտ. 27ի թուին մէջ ԱՐՄԷՆԻԱ վերնագրին տակ հրատարակած էր նաև երզրումի հայ դիւղացիների թշուառ վիճակը (տեսնել «Արմէնիա» թ. 33) և Պարոն Մկրտիչ Թերլեմէզեանի բանտարկութիւնն ի վան որոնք արդէն ծանօթ են «Արմէնիա»ի ընթերցողներին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Դահլիճէն կը հեռագրեն թէ մեծ պատուով ընդունուած է այնտեղ օսմանեան յանձնակատար Ղազի Մուխթար փաշան որի պաշտօնն է Սբը Տրըմլընա Վօլֆին հետ գործակցել Սուլտանը խաղաղացնելու և Եգիպտոսին վարչական մի նոր կազմակերպութիւն տալու համար։

—Անգլիական Հնդկաստանի փոխարքային մի յայտարարութիւն հրատարակած է թէ Պիրմանի թիկունքը թագաւորին երբեմն կառավարած երկիրներն այլևս Անգլիայի թագուհուն կը վերաբերին և պիտի կառավարուին Հնդկաստանի փոխարքային անուանած պաշտօնեաներէն։

—Ալմանական կառավարութիւնը Թիւրքիայի հետ մի նոր առևտրական դաշնագիր կնքած է որ առաջինէն աւելի նպաստաւոր է Ալմանիային, իսկ վաճառքներ ներածելու համար ի Թիւրքիա Այդ դաշնագիրը պիտի սկսի գործադրութեան դրուիլ երբ միւս պետութիւններն ալ որք նոյնպէս դաշնագրով կապուած են Թիւրքիային հետ, իրենց հաւանութիւն տան։

—Օտէսայէն եկած մի հեռագիր կիմացունէ թէ 4,000 Պարսիկներ որոց մեծ մասը հովիւ էին, յարձակեցան Մուղանի քաղաքին վրայ որ ռուսոպարսկական սահմանագլխին վրայ է և գրաւեցին զայն։ Քաղաքին մէջ չատ քիչ զօրք կար որք չկրցան դիմադրել ըստ բաւականին. մի ռուսական սպայ և մի խաղախ սպանուեցան։

—Մուխթար փաշան յայտներ է Բ. Դրան թէ անկարելի է գործադրել անգլօ-թիւրքական համաձայնութեան դաշնագիրը, ըստ որում հարկ կը լինի բոլոր պատրաստի ոյժերը գործածել յետ մղելու համար Արաբները որոնք միացած են Վատի-Հալֆայի շրջակայները։ Լուր կայ թէ Մուխթար փաշան իւր տեղեկագրի մէջ յայտարարած է որ անկարելի է խաղաղացնել Արաբները առանց գործակցութեան օսմ. զօրքերին։ Daily-Chronicle ի գրածին համեմատ, Մուխթար փաշայի և Սըր Տ. Վօլֆի մէջ համաձայնութիւնը անհնար կերևի։

—Պուլկարիան կը հեռագրեն Յունվար 4ին հետևեալը։

«Երկ օտարազգի սպայներն որոնք եկած էին ներկայ գտնուելու նշանառութեան փորձերին, մի փառը հրամայուցին Բուլղարացի բոլոր սպայներին որոնք մասնակցած էին հրացանաձգութեան այդ փորձերի։ Ընդունելութիւնը շատ մտերմական եղաւ և մեծ բազմութիւն կար։

Գնդապետ Քաֆարելի, Ֆրանսական պատուիրակը, իբր ամենէն երկրագործը, օտարազգի սպայների կողմէն չնորհակալութիւն յայտնեց բոլոր պետութիւններին որոնք պատուիրակներ ղրկած էին և յայտարարեց թէ երջանիկ կը համարի իրեն, տեսնելով բուլղարի բոլոր սպայներին մէջ տիրող մտերմական միաբանութիւնը։

—Ալմանական կառավարութիւնը Թիւրքիայի հետ մի նոր առևտրական դաշնագիր կնքած է որ առաջինէն աւելի նպաստաւոր է Ալմանիային, իսկ վաճառքներ ներածելու համար ի Թիւրքիա Այդ դաշնագիրը պիտի սկսի գործադրութեան դրուիլ երբ միւս պետութիւններն ալ որք նոյնպէս դաշնագրով կապուած են Թիւրքիային հետ, իրենց հաւանութիւն տան։

—Օտէսայէն եկած մի հեռագիր կիմացունէ թէ 4,000 Պարսիկներ որոց մեծ մասը հովիւ էին, յարձակեցան Մուղանի քաղաքին վրայ որ ռուսոպարսկական սահմանագլխին վրայ է և գրաւեցին զայն։ Քաղաքին մէջ չատ քիչ զօրք կար որք չկրցան դիմադրել ըստ բաւականին. մի ռուսական սպայ և մի խաղախ սպանուեցան։

—Մուխթար փաշան յայտներ է Բ. Դրան թէ անկարելի է գործադրել անգլօ-թիւրքական համաձայնութեան դաշնագիրը, ըստ որում հարկ կը լինի բոլոր պատրաստի ոյժերը գործածել յետ մղելու համար Արաբները որոնք միացած են Վատի-Հալֆայի շրջակայները։ Լուր կայ թէ Մուխթար փաշան իւր տեղեկագրի մէջ յայտարարած է որ անկարելի է խաղաղացնել Արաբները առանց գործակցութեան օսմ. զօրքերին։ Daily-Chronicle ի գրածին համեմատ, Մուխթար փաշայի և Սըր Տ. Վօլֆի մէջ համաձայնութիւնը անհնար կերևի։

—Պուլկարիան կը հեռագրեն Յունվար 4ին հետևեալը։

«Երկ օտարազգի սպայներն որոնք եկած էին ներկայ գտնուելու նշանառութեան փորձերին, մի փառը հրամայուցին Բուլղարացի բոլոր սպայներին որոնք մասնակցած էին հրացանաձգութեան այդ փորձերի։ Ընդունելութիւնը շատ մտերմական եղաւ և մեծ բազմութիւն կար։

Գնդապետ Քաֆարելի խօսքերը ընդունուեցան երկարատև ուռանեներով։

Ա.յնուհետև պատերազմական նախարարը չնորհակալութիւն յայտնեց բոլոր պետութիւններին որոնք պատուիրակներ ղրկած էին և յայտարարեց թէ երջանիկ կը համարի իրեն, տեսնելով բուլղարի բոլոր սպայներին մէջ տիրող մտերմական միաբանութիւնը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՆԿՏ. 29ԷՆ ՅՈՒՆՎԱՐ 5 1886

ՆԵՐԱՔՈՒՓԻԿ

==

ԲՈՒՐԴ. Հրապարակը անցեալ դրութեան մէջ է. օրուան գիները կիւրճիւ երկրորդ կարում ճերմակները 140–145, գունաւորները 105–110 ֆր. Նուխա երկրորդ կարում գառան տե. 115–117½, ոչխարի ճերմակները 110–112½ և գունաւորները 95–100 ֆր. Անկորաի ապրանքները ըստ տեսակին 95–100 ֆր. 100 քիլօն։

ԲԱՄՊԱԿ. Առանձին ապրանքները ընտիրները 55–56, երկրորդականները 52–52½ ֆր. 50 քիլօն։

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ. Մինչ հաստատ լուրեր դիները այլ վերստին ժաս մը յաւելում գտած են, շաբթուս վաճառումներէն կը նշանակեմք 120 հակ Սիրիոյ մետաքս 50–52 ֆր. 4 հակ Պրուսայի 46–50 ֆր. 7 հակ Նուխայի 39–43 ֆր., 2200 Նուխայի կոկոն 6¾–7¾ ֆր. 400 քիլօ Նուխայի ֆիլտէն 9¼ ֆր. 1500 քիլօ չխաւ 3, 15 ֆր. 1000 թոնվալ 4, 05 ֆր. քիլօն։

ԿԱՆԵՓ. Բաւականին ապրանք հասած է, դիները ըստ տեսակին 55–60 ֆր. 100 քիլօն։

ՅՈՐԵՆ. Թոյլ կ'երթայ, օրուան դիները 14–18 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine). Փիչ պահանջ կայ, ըստ տեսակին 12–15 ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). Դիները կտրելով 13 ֆր. է վաճառումներ եղած է։

ԼՈՒԲԻԱ. Շատ թոյլ է և բարեփոխութեան ալ չատ յոյս չերևիր. Տրապիզոնի մտրըտած տեսակները 22½ ֆր. 100 քիլօն։

ԿԱՆԵՓԻ ՀՈՒՆՏ (graines de chanvre). Օտէսա և Տանուվի տեսակները 21–22 ֆր. Տաճկաստանի Սև Ծովու ապրանքները 27 ֆր. 100 քիլօն։

ԹՈՒՉՆԱԿՆԵՐ (alpiste). 100 քիլօն 25–25½ ֆր.։

ՇՈՒՇՄԱՆ (sésames). 38–38½ ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ. 100 քիլօն 29 ֆր.։

ԿՏԱՒԱՀԱՑ. Թոյլ կ'երթայ, 25½–26 ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Կտրատածները 80 և չԸ կտրատը 35 ֆր. 100 քիլօն։

ԾԻՐԱՆԻ ԿՈՒՏ. Ընտիր տեսակները 57–59 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՑ. 100–115 ֆր. 100 քիլօն։

ՄԵՂՐԱՄՄՈՄ. 150–167½ ֆր. 50 քիլօն։

ՍՓՏԻ ՄՈՐԹ. Տուզլեան 28–35 ֆր.։

ԱՐՏԱՔՈՒԹԻՒՆ

==

ԵՄԲԱՐ. 3 քիլանոցը 57½ և 2 քիլանոցը 58 ֆր. 100 քիլօն։

ՈՈՒՐՃ. Բիւօ ապրանքներ 42–53 ֆր. 50 քիլօն, քիչ գործ կ'ըլլայ։

ՈՐԴՈՆ ԿԱՐՄԻՐ. Ճերմակները 3. 35–3, 50, ևերը 3, 40–4, 20 ֆր. ք.։

ՊՂՊՂ. Սենկաբոր 98–99 և ժաւա 89 ֆր. 50 քիլօն։ Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

«Արմէնիա»ի բաժնորդագրութիւնները կը լինին տարեկան, վեցամսեայ կամ եռամսեայ։ Ուստի նոր բաժնորդագրուողները պէտք է սահման իրենց թերթեր կամ օգտատուն ամսի (եւրոպական ամսաթուով) կամ նոյեմբեր կամ փետրուարի և կամ մայիսի սկիզբէն։ Բաժնորդագրութիւնները պէտք է որ յանխիկ վճարուին։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »

Ընդ ծախուիս Պարսկ., «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Օտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրքական կամ ռուսական փոստի բղրադրոշմ ղրկեն «Արմենիա»ի խմբագրատեան։

JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articles pour Photographes, peintres et ingénieurs.

Cartes Géographiques et maritimes, Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissions de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

Grand assortiment de Musique des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc.,etc.

On se charge de toutes sortes de Commissions.

ՄԱՆՈՒԿ ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՏՆԱԿ ԳԱՒԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՍԱՐԼԷՆ ԵՒ ՁՈՐԼԷՆ ՀՆԷՆ ԵՒ ՆՈՐԷՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՆՈՑ

==

Մաոն Ա. Բ. Գ. (առարտ)

Հայարնակ գառատաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, չէն և ամայի վանօրէից նկարագիրն, աւանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Սգզ. գործ մի է, ամենահարուստ և հետաքրքրական դրուած չրջահայեաց և չատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յամախակի վերծանութեան։

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քովկէդրոնատեղին է Պօլիս Պահճէ-գամու հայագործի փուան դէմ Գ. էֆ. Ձոնեանի վաճառատունն, թիւ 11։

Գին — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար դոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.